

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ և ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԾԻԿ ՊՈԱԿ

ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳԻՐ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՔՐ ԾԱՎԱԼԻ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

Ս5 – ՍԱՐԴԱՐԱՊԱՏ – ՆՈՐ ԱՐՄԱՎԻՐ - Տ-3-52 ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ

ԿՄ 0+000-ԿՄ 6+147

ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

Հուլիս 2018

ՄԱՍ 1: Ընդհանուր տեղեկատվություն ծրագրի և տեղանքի վերաբերյալ

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ & ՎԱՐՉԱԿԱՆ		
Երկիր	<i>Հայաստանի Հանրապետություն</i>	
Ծրագրի անվանումը	<i>Մ5 – Սարդարապատ – Նոր Արմավիր - S-3-52 Ճանապարհահատվածի վերականգնում</i>	
Ծրագրի շրջանակը և գործունեությունը	<p><i>Ծրագիրը նախատեսում է Մ5 – Սարդարապատ – Նոր Արմավիր - S-3-52 ճանապարհի վերականգնումը 6.146 կմ երկարությամբ:</i></p> <p><i>Նախագծային աշխատանքներն իրականացվել են համաձայն գործող նորմերի և տիպարային նախագծերի:</i></p> <p><i>Նախագծում ընդունված հիմնական տեխնիկական պարամետրերն են՝</i></p> <ul style="list-style-type: none"> ➤ <i>Հողային պաստառի լայնությունը 10-14մ</i> ➤ <i>Երթևեկային մասի լայնությունը 6-12 մ</i> ➤ <i>Կողնակների լայնությունը 1-3.5 մ</i> ➤ <i>Մայթերի երկարությունը 2.467կմ</i> <p><i>Հիմնվելով գեոդեզիական ակնադիտական, երկրաբանական, քարտեզագրման, լաբորատոր փորձարկումների արդյունքների, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների հիման վրա նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները:</i></p> <ul style="list-style-type: none"> ➤ <i>Ճանապարհի հիմնանորոգում</i> ➤ <i>Հողային աշխատանքներ</i> ➤ <i>Արհեստական կառուցվածքների նորոգում և նորերի տեղադրում</i> ➤ <i>Ճանապարհային անվտանգության բարելավում (երթևեկության նշանների տեղադրում և նշագծում)</i> ➤ <i>Մետաղական արգելափակոցի տեղադրում</i> ➤ <i>Մայթերի կառուցում</i> ➤ <i>Կամուրջների նորոգում</i> 	
Կառուցվածքային կազմը (Անուն և կոնտակտային տվյալներ)	ՀԲ ծրագրի թիմի ղեկավար Նարգիս Ռուսկուլովա	Ծրագրի կառավարում <i>Տրանսպորտի ծրագրերի իրականացման կազմակերպություն ՊՈԱԿ Տնօրեն՝ Վազգեն Պետրոսյան</i> <i>Սոցիալական ազդեցության կառավարման բաժնի ղեկավար՝ Սոնա Պողոսյան</i> <i>Բնապահպանական ազդեցության կառավարման բաժնի ղեկավար՝ Գևորգ Աֆյան</i>
Իրականացման կազմը (Անուն և կոնտակտային տվյալներ)	Անվտանգության վերահսկողություն Դարեջան Կապանադզե և Ռեյմոնդ Վան Քուլին բնապահպանություն Սանջայ Ագարվալ, սոցիոլոգ	Կապալառու Շինարարության կապալառու <i>(պետք է ընտրվի)</i>
ՏԵՂԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ		
Շինարարական հրապարակը	<i>Մ5 – Սարդարապատ – Նոր Արմավիր - S-3-52 Ճանապարհահատվածի վերականգնում</i>	

Տեղանքի գտնվելու վայրի նկարագրությունը	Արմավիրի մարզ	Հավելված 1: Տեղանքի քարտեզ [x]Այդ []Ոչ
Հողի սեփականատիրոջ անունը / անվանումը	Համայնք / պետություն	
<p>Աշխարհագրական, ֆիզիկական, կենսաբանական, երկրաբանական, հիդրոգրա-ֆիական և սոցիալ-տնտեսական պայմանների նկարագրությունը</p>	<p>Տեղամասը վարչականորեն գտնվում է Արմավիրի մարզում: Այն անցնում է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասով, Արաքս գետի ձախ կողմում:</p> <p>Տեղամասի ռելիեֆը հարթավայրային է, բացարձակ բարձրությունների նիշերը տատանվում են 860-885մ սահմաններում:</p> <p>Ռելիեֆի ծագումնային տիպը կուտակումային է, ներկայացված լճա-այլուվիալ նստվածքներով:</p> <p>Ռելիեֆի ձևերը ներկայացված են Արաքս գետի հնանունով և թաղված դարավանդներով, որոնք մակերևույթի վրա չեն արտահայտվում:</p> <p>Տեղամասի բուսականությունը անապատային և կիսաանապատային է, ներկայացված հազարատերևուկային անապատով:</p> <p>Հողերը անապատային են, ներկայացված հնուց ռոտզվող այլուվիալ մարգագետնային հողերով:</p> <p>Տեղամասը պատկանում է Ախուրյան-Հրազդան լանդշաֆտա-ջրաբանական շրջանին: Միջին հոսքը մեկ քառ. կմ տերիտորիայից 5.0 լ/վրկ է:</p> <p>Տեղամասում սելավներ չեն լինում:</p> <p>Շինարարական տեղամասը գտնվում է 861-1 կլիմայական գոտում: Ամռանը եղանակը շոգ և չոր է, իսկ ձմռանը ցուրտ, անհողմ է: Տարեկան օդի միջին ջերմաստիճանը 11.4°C է: Ամենացուրտ ամսվա միջին ջերմաստիճանը -4.7°C է: Ամենատաք ամսվա միջին ջերմաստիճանը 25.6°C է: Բացարձակ ջերմաստիճանը ամռանը 41°C է: Ձմռան առավելագույն բացասական ջերմաստիճանը -31°C է: Քամու տարեկան միջին ուժգնությունը 1.1 մ/վրկ է: Տարեկան տեղումները 251 մմ են: Առավելագույն սառեցման խորությունը 70 սմ է: Նախագծվող ճանապարհը անցնում է Սարդարապատ և Նոր Արմավիր համայնքներով:</p> <p>Վերակառուցվող ճանապարհի երկայնքով կմ 0+000-կմ 0+460, կմ 4+260-կմ 5+230, կմ 5+460-կմ 5+560 հատվածներում գտնվում են տներ: Տները հիմնականում մեկհարկանի կամ երկհարկանի են: Ճանապարհի երկայնքով չկան բազմահարկ շենքեր: Ծրագրային ճանապարհին առկա են երեք իջատեղեր, որոնց վերակառուցումը նույնպես ներառված է նախագծում: Առաջինը՝ կմ 4+637 հատվածում դեպի մանկապարտեզ տանող իջատեղն է 130 մ երկարությամբ: Երկրորդը՝ կմ 4+900 հատվածում դեպի գյուղապետարան տանող իջատեղն է 130 մ երկարությամբ: Երրորդը՝ կմ 4+965 հատվածում դեպի բուժ. կետ տանող իջատեղն է 70 մ երկարությամբ: Կմ 2+420 և կմ 5+880 հատվածում առկա են երկու լցակայաններ: Խանութները տեղակայված են կմ 0+140, կմ 5+880 հատվածում: Կմ 4+580-ում առկա են դպրոց և մանապարտեզ: Կմ 5+840, կմ 4+940 հատվածում համապատասխանաբար առկա են ռեստորան և մշակույթի տուն:</p>	
Նյութերի՝ մասնավորապես լցանյութերի, ջրի, քարերի, վերցման վայրը	<p>Շինարարական աշխատանքների համար մատակարարվող ջուրը հրապարակ է բերվելու բաքերով կամ վերցվելու է այնպիսի աղբյուրից, որից ջրառ կատարելու համար տրվել է ջրօգտագործման թույլտվություն: Լցանյութերը պետք է ստացվեն լիցենզավորված վաճառողներից՝ ցանկալի է ծրագրի իրականացման տարածաշրջանից: Կապալառուները կարող են բացել և շահագործել նոր հանքեր, սակայն այս դեպքում նրանք պարտավոր են ստանալ լիցենզիա նախքան աշխատանքները սկսելը: Ասֆալտը / շինարարական նյութերը պետք է գնվեն պաշտոնական մատակարարից:</p>	

ՕՐԵՆԱՐԴՈՒԹՅՈՒՆ

<p>Ծրագրի գործողության համար կիրառվող ազգային օրենսդրությունը և թույլտվությունները</p>	<p><i>Բնապահպանական թույլտվությունները, որոնք անհրաժեշտ են ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար, հետևյալն են.</i></p> <ul style="list-style-type: none"> ➤ <i>շինարարության լիցենզիա՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին,</i> ➤ <i>շինարարության թույլտվություն՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին համայնքի ղեկավարի կողմից,</i> ➤ <i>հանքի շահագործման լիցենզիա՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին, այն դեպքում եթե նա շահագործում է հանքը,</i> ➤ <i>շինարարական աղբի տեղադրման համաձայնություն՝ տրված շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուին համայնքի ղեկավարության կողմից:</i>
<p>ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ</p> <p>Ներկայացնել երբ / որտեղ են տեղի ունեցել հանրային խորհրդակցությունները</p>	<p><i>Հանրային լսումը իրականացվել է Մարդարապատ համայնքում 2018 թ-ի հուլիսի 6-ին: Հանրային լսման նպատակն էր համայնքին ներկայացնել Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագիրը (Լրացուցիչ ֆինանսավորում), համայնքում վերանորոգվելիք ճանապարհի նախնական նախագիծը, ԲՄԿՊ-ն ինչպես նաև պատասխանել համայնքի բնակիչների ծրագրի հետ կապված հարցերին: Հանրային լսման մասնակիցների թիվն է 14՝ ներառյալ 2 կին: Բացի համայնքի բնակիչներից հանրային լսումներին մասնակցել են նախագծող կազմակերպության ներկայացուցիչը, ՏԾԻԿ-ի ինժեները և բնապահպանական և սոցիալական երաշխիքների մասնագետը:</i></p> <p><i>Նախնական ԲՄԿՊ-ները տեղադրվել են ՏԾԻԿ-ի կայքում հանրային լսումներից 5 օր առաջ և հանրային լսման ընթացքում մասնակիցները տեղեկացվել են, որ կարող են ծանոթանալ կայքում տեղադրված ԲՄԿՊ-ներին: Տեղական ինքնակառավարման ներկայացուցիչները ևս տեղեկացվել են այդ մասին: Հանրային լսման մասնակիցներին տրամադրվել են ՏԾԻԿ-ի գործունեության և ԿՆՃՅԲ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ (10-15 հատ յուրաքանչյուր համայնքում)</i></p> <p><i>Հանրային լսման մասնակիցների և համայնքի ղեկավարի կողմից ստորագրված հանրային լսման արձանագրությունները, հանրային լսման լուսանկարները և հարց և պատասխանի ամփոփումը ներկայացված են սույն հավելվածում: Հանրային լսման մասնակիցների կողմից բարձրացված, համայնքի համար առավել կարևոր հարցերը ներառվել են համապատասխան համայնքի ԲՄԿՊ-ի մոնիտորինգի պլանում՝ ծրագրի ընթացքում դրանք մշտադիտարկելու նպատակով:</i></p>
<p>ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ</p> <p>Նախատեսվում է արդյոք կարողությունների հզորացում</p>	<p><i>[] Ոչ կամ [x] Այո Կապալառուի ընտրությունից հետո՝ նախքան շինարարական աշխատանքների մեկնարկը, վերահսկողության խորհրդատուի աջակցությամբ ՏԾԻԿ ՊՈԱԿ-ի կողմից կիրականացվի Կապալառուի աշխատակազմի ԲՄԿՊ իրականացման վերաբերյալ ընդհանուր ուղղվածության ուսուցում: Հավելված 2-ը ներառում է կարողությունների զարգացման ծրագիրը:</i></p>

ՄԱՍ 2: ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ			
	Գործունեություն / խնդիր	Կարգավիճակ	Գործարկված պահանջները
Արդյո՞ք տեղանքում գործունեությունը ներառում է հետևյալներից որևէ մեկը	1. Ճանապարհների վերականգնում	[x] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	2. Փոքրածավալ երթևեկության ենթակառուցվածքի նոր շինարարություն	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ա-ն ստորև
	3. Մակերևութային ջրահեռացման համակարգի վրա ազդեցություններ	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Բ-ն ստորև
	4. Պատմական շենքեր և շրջաններ	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Գ-ն ստորև
	5. Հողի օտարում ¹	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Դ-ն ստորև
	6. Վտանգավոր կամ թունավոր նյութեր ²	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ե-ն ստորև
	7. Ազդեցություններ անտառների կամ պահպանվող տարածքների վրա	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Զ-ն ստորև
	8. Չփայթեցված զինամթերքի առկայության վտանգ	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Է-ն ստորև
	9. Երթևեկության և հետիոտների անվտանգություն	[x] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ը-ն ստորև
	10. Հողի սեփականության վրա ազդեցություն	[] Այո [x] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Ը-ն ստորև
	11. Սոցիալական ռիսկ	[x] Այո [] Ոչ	Եթե «Այո», տես Բաժին Թ-ն ստորև

¹ Հողի օտարումը ներառում է մարդկանց տեղահանումը, ապրուստի փոփոխությունը, մասնավոր սեփականություն մուտք գործելը, որը վերաբերում է գնված / փոխանցված հողին, ազդեցություն է թողնում օտարվող հողի վրա ապրող և/կամ ինքնական տեղավորված և/կամ գործունեություն վարող (օրինակ՝ տաղավար ունեցող) մարդկանց վրա:

² Թունավոր / վտանգավոր նյութերը ներառում են, սակայն սահմանափակված չեն ասբեստով, թունավոր ներկերով, թունավոր լուծիչներով, կապար պարունակող ներկի հեռացմամբ և այլն:

ՄԱՍ 3: ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
0. Ընդհանուր պայմաններ	Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն	<p>(ա) Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացված են նախատեսվող միջոցառումների վերաբերյալ</p> <p>(բ) Հասարակությունը տեղեկացված է նախատեսվող աշխատանքների մասին լրատվամիջոցների օգնությամբ և/կամ հասարակական վայրերում՝ ներառյալ աշխատանքների կատարման վայրը)</p> <p>(գ) Ձեռք են բերվել շինարարական և/կամ վերականգնման աշխատանքների կատարման համար պահանջվող բոլոր թույլտվությունները</p> <p>(դ) Կապալառուին պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն պատշաճ կերպով, պահպանելով անվտանգության պահանջները՝ հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Աշխատողների անհատական պաշտպանիչ արտահագուստը (ԱՊԱ) պետք է համապատասխանի միջազգային լավագույն փորձին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ և ակկոցներ, պաշտպանիչ բաձկոնակներ և կոշիկներ)</p> <p>(զ) Շինարարական հրապարակում համապատասխան տեղեկատվական ցուցանակների տեղադրումը հնարավորություն կտա տեղեկացնելու բանվորներին հիմնական կանոնների վերաբերյալ, որոնց անհրաժեշտ է հետևել աշխատանքներ իրականացնելիս</p>
Ա. Վերականգնման և / կամ շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(ա) Փորման աշխատանքների իրականացման ժամանակ պետք է կիրառվեն փոշին նստեցնող միջոցառումներ, օրինակ՝ հողի վրա ջուր ցողալը և խոնավեցնելը</p> <p>(բ) Քանդված մնացորդները, փորված հողը և նյութերը պետք է պահվեն վերահսկվող տարածքում և դրանց վրա պետք է ջուր ցողալ՝ փոշին նստեցնելու նպատակով</p> <p>(գ) Պննմատիկ փորման կամ ծածկի ու հիմքերի քանդման ժամանակ, փոշին պետք է նստեցնել անընդհատ ջուր ցողալով և/կամ հրապարակում տեղադրելով փոշին նստեցնող ծածկոց</p> <p>(դ) Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհը) պետք է զերծ պահվի հողից և մնացորդներից՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով</p> <p>(ե) Շինարարական հրապարակում շինարարական թափոնների բացօթյա այրումը չի թույլատրվում</p> <p>(զ) Բոլոր օգտագործվող մեքենաները պետք է համապատասխանեն արտանետումներին առնչվող տեղական օրենսդրությանը, և պետք է պատշաճ կերպով շահագործվեն և սպասարկվեն, հրապարակներում շինարարական տեխնիկական չպետք է պարապուրդի մատնվի</p>
	Աղմուկ	<p>(ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը պետք է սահմանափակվի համաձայնագրում նշված ժամերով (բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ մեխանիկական սարքավորումներ, սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորիս հեռու</p>

	Ջրի որակ	(ա) Հրապարակում պետք է իրականացվեն էրոզիայի և նստվածքների կարգավորման համապատասխան միջոցառումներ, օրինակ՝ տեղադրվեն հարդի պարկեր և/կամ նստվածքի հեռացման ցանցեր՝ նստվածքների հրապարակից հեռացումը, և ջրահեռացման համակարգում ու մոտակա ջրհոսքերում և գետերում ավելցուկային տուրբուլենտությունը կանխելու նպատակով
	Թափոնների կառավարում	<p>ա) Աղբի հավաքումը, դրա հեռացման ուղիները և տեղադրման վայրերը պետք է հստակեցվեն աղբի հիմնական տեսակների համար, որոնք կառաջանան փորումից, քանդումից և շինարարական գործունեությունից</p> <p>բ) Շինարարական և քանդման աշխատանքներից առաջացած հանքային թափոնները պետք է առանձնացվեն օրգանական, հեղուկ և քիմիական թափոններից՝ տեղանքում դրանց բաժանումը իրականացնելով և համապատասխան կոնտեյներներում պահելով,</p> <p>գ) Շինարարական աղբը պետք է հավաքվի և տեղադրվի աղբավայրում՝ պատշաճ կերպով հավաստագրված հավաքողների կողմից</p> <p>դ) Շինարարական աղբի հեռացման վերաբերյալ պետք է կատարվեն գրառումներ, ինչը հնարավորություն կտա երաշխավորելու պատշաճ կառավարումը</p> <p>ե) Հնարավորության դեպքում կապալառու կիրականացնի պիտանի նյութերի վերամշակում և դրանց կրկնակի օգտագործում (ասբեստ պարունակող նյութերի բացառությամբ)</p>
Բ. Մակերևութային ջրահեռացման համակարգի վրա ազդեցություններ	Ջրի որակ	<p>(ա) Ստորերկրյա ջրերի չկառավարվող արդյունահանումը, օգտագործված ջրերի, ցեմենտային ջրերի կամ ցանկացած այլ կեղտաջրերի չկարգավորված հեռացումը դեպի հող կամ մոտակա ջրահոսքեր ու գետեր պետք է բացառվի: Կապալառու պետք է ձեռքբերի ջրի արդյունահանման և դեպի հանրային կոյուղի կարգավորված ջրահեռացման համար բոլոր անհրաժեշտ հավաստագրերը և թույլտվությունները</p> <p>բ) Պետք է տեղադրվի և շահագործվի անձրևաջրերի հեռացման պատշաճ համակարգ՝ թույլ չտալով նստվածքի կուտակումը, աղտոտումը, խցանումը կամ այլ բնական ջրահոսքերի, գետերի, լճակների և լճերի վրա շինարարական աշխատանքների արդյունքում այլ բացասական ազդեցությունը</p> <p>գ) Վառելիքի, քսայուղերի կամ այլ թունավոր և վտանգավոր նյութերի պատահական արտահոսքը կանխելու և դրա առաջացման դեպքում ճիշտ գործելու նպատակով, պետք է մշակվեն հատուկ կանոնակարգեր</p> <p>դ) Շինարարական մեքենաները և սարքավորումը պետք է լվացվեն հատուկ այն նպատակով սահմանված վայրերում, որտեղից ջրի արտահոսքը չի առաջացնի մակերևութային բնական ջրերի աղտոտում</p>
Գ. Պատմական շինություններ	Մշակութային ժառանգություն	<p>(ա) Եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են պատմական շինության մոտակայքում կամ պատմական տարածքում, ցանուցում պետք է ուղարկվի և համաձայնություններ / թույլտվություններ ստացվեն տեղական իշխանություններից, և բոլոր շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն ազգային օրենսդրության պահանջների համաձայն</p> <p>բ) Հողային կամ շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոները պետք է գրանցվեն, տեղեկատվությունը պետք է տրամադրվի պատասխանատու մարմիններին, աշխատանքները պետք է հետաձգվեն կամ դրանց կատարման վայրը փոփոխվի՝ գտածոների հետագան պարզելու նպատակով</p>
Դ. Հողի օտարում	Հողի օտարման պլան /	(ա) Տվյալ ճանապարհի երկայնքով հողի օտարում չի ակնկալվում:

	շրջանակ	(բ) Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն պահանջվում է, կամ եթե օրինական և ոչ օրինական օգտագործողների եկամտի վրա ազդեցություն չէր ակնկալվում, սակայն կարող է առաջանալ, ապա Բանկի խմբի ղեկավարը պետք է անմիջապես տեղեկացվի:
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	(ա) Եթե ասբեստը տեղակայված է ծրագրի տարածքում, այն պետք է հստակ մակնշված լինի որպես վտանգավոր նյութ (բ) Հնարավորության դեպքում ասբեստը պետք է ծածկված լինի՝ դրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով (գ) Նախքան հեռացումը (եթե հեռացումն անհրաժեշտ է) ասբեստը պետք է մշակվի խոնավ նյութով՝ փոշու առաջացումը նվազեցնելու նպատակով (դ) Ասբեստը պետք է մշակվի և հեռացվի փորձառու և մասնագիտացած անձնակազմի կողմից (ե) Եթե ասբեստ պարունակող նյութերը չեն կարող պահվել ժամանակավորապես, թափոնները պետք է պահվեն կոնտեյներների մեջ՝ համապատասխան մակնշումով: Անվտանգության միջոցառումներ պետք է իրականացվեն՝ հրապարակից դրանց չարտոնագրված հեռացումը բացառելու նպատակով (զ) Հեռացված ասբեստի կրկնակի օգտագործումը չի թույլատրվում
	Թունավոր / վտանգավոր թափոնների կառավարում	(ա) Վտանգավոր և թունավոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի ապահով կոնտեյներներում՝ նշելով դրանց բաղադրության, հատկությունների և մշակման վերաբերյալ տեղեկությունները (բ) Վտանգավոր նյութեր պարունակող կոնտեյներները պետք է տեղադրվեն անջրաթափանց կոնտեյների վրա՝ արհատուքը բացառելու նպատակով (գ) Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ հավաստագրված փոխադրողների կողմից և տեղադրվեն հավաստագրված վայրում (դ) Թունավոր բաղադրիչներ պարունակող ներկերի կամ լուծիչների կիրառումը չի թույլատրվում
Զ. Ազդեցություններ անտառների, գերխոնավ և/կամ պահպանվող տարածքների վրա	Էկոհամակարգի պահպանություն	(ա) Բոլոր ընդունված բնադրավայրերը, գերխոնավ և պահպանվող տարածքները, որոնք գտնվում են հրապարակի անմիջական մոտակայքում չպետք է վնասվեն կամ օգտագործվեն, աշխատակազմին պետք է խիստ արգելվի իրականացնել որս, խետահավաք, ջրածածկում կամ այլ վնասակար գործողություններ (բ) Շինարարական հրապարակի մոտակայքում խոշոր ծառերը պետք է ուսումնասիրվեն և հաշվառվեն, խոշոր ծառերը պետք է մակնշվեն և ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի և ծառերին վնաս հասցնելը՝ բացառվի (գ) Հարակից գերխոնավ տարածքները և ջրահոսքերը պետք է պահպանվեն արտահոսքից՝ Էրոզիան և նստվածքի առաջացումը կարգավորող համապատասխան միջոցառումների իրականացման միջոցով, որոնք ներառում են սակայն սահմանափակված չեն հարդի պարկերի և նստվածքների հեռացման ցանցերի տեղադրմամբ (դ) Չհավաստագրված հանքավայրերի, քարհանքերի, աղբավայրերի օգտագործումը չի թույլատրվում՝ հատկապես պահպանվող տարածքներում
Է. Չփայթեցված գինամթերքի առկայության վտանգ	Մարդու առողջությանը և անվտանգությանը հասցվող վտանգ	(ա) Ցանկանաձ փորման աշխատանք սկսելուց առաջ կապալառում պետք է հավաստիանա, որ շինարարական տարածքը ստուգված է համապատասխան մարմինների կողմից և այնտեղից հեռացված է չպայթեցված ցինամթերքը
Ը. Երթևեկության և	Շին. աշխատանքների	(ա) Համաձայն տեղական օրենսդրության՝ կապալառուն պետք է ապահովի շինարարական հրապարակի

<p>հետիոտնի անվտանգություն</p>	<p>իրականացման արդյունքում հանրային երթուղիները և հետիոտնին հասցված ուղղակի կամ անուղղակի վնաս</p>	<p>անվտանգությունը և երթուղիության կարգավորումը: Այս միջոցառումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում</p> <ul style="list-style-type: none"> • ցուցապատման, զգուշացնող նշանների, արգելափակողների տեղադրմամբ, երթուղիության շրջանցող ուղիների ապահովմամբ՝ շինարարական հրապարակը լավ տեսանելի դարձնելու և բնակչությանը հնարավոր վտանգների մասին զգուշացնելու նպատակով • երթուղիության կառավարման համակարգի առկայությամբ և անձնակազմի ուսուցմամբ, հատկապես շինարարական տեղանք մուտք գործելու և հրապարակի մերձակայքում ցանրաբեռնված երթուղիության դեպքում • Աշխատանքային ժամերի փոփոխմամբ՝ համապատասխանեցնելով դրանք տեղական երթուղիության առանձնահատկություններին, օրինակ՝ պիկային ժամերին կամ անասունների տեղաշարժի ժամերին փոխադրումների կատարումից խուսափելով • Անհրաժեշտության դեպքում՝ պատրաստված անձնակազմի կողմից երթուղիության կառավարման իրականացմամբ՝ հրապարակում մարդկանց անվտանգ տեղաշարժն ապահովելու նպատակով • Շինարարության ընթացքում գրասենյակային կառույցների, խանութների և բնաշինների անվտանգ ու շարունակական հասանելիության ապահովմամբ
<p>Թ. Սոցիալական ռիսկի կառավարում</p>	<p>Հասարակության հետ հարաբերության կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> • Կապալառուն նշանակում է տեղական կապի օղակ, որը պատասխանատու է տեղական բնակչության խնդրանքներին / բողոքներին պատասխանելու համար • Տեղական համայնքները պետք է խորհրդակցվեն արտաքին աշխատուժի և տեղացիների միջև հնարավոր հակամարտությունները բացահայտելու և կանխարգելելու նպատակով • Տեղեկացնել բնակչությանը շինարարության և աշխատանքային գրաֆիկների, ծառայությունների ընդհատման, երթուղիության շրջանցման երթուղիների և ժամանակավոր ավտոբուսային երթուղիների, պայթեցման և քանդման մասին առնվազն 3 օր առաջ՝ նախքան շինարարական աշխատանքների իրականացումը: • Սահմանափակել գիշերային ժամերին շինարարական աշխատանքները: Անհրաժեշտության դեպքում ապահովել գիշերային աշխատանքը խնամքով նախատեսված է, և համայնքը պատշաճ կերպով տեղեկացված է, որպեսզի նրանք կարողանան անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել: • Ծառայությունների ընդհատման պարագայում առնվազն հինգ օր առաջ (ներառյալ ջուր, էլեկտրականություն, հեռախոս, ավտոբուսային երթուղիներ) համայնքը պետք է տեղեկացված լինի շինարարական տեղամասում, ավտոբուսի կանգառներում և տուժած տներում / բիզնեսում հայտարարությունների փակցման միջոցով: Եթե ծառայությունը պատահականորեն ընդհատվում, համայնքը պետք է անմիջապես տեղեկացվի, վերականգնման ծրագիրը պետք է ներկայացվի համայնքին, հնարավորինս շուտ և խափանումը հնարավորինս արագ վերականգնվի: • Գործատուն սահմանում է բողոքարկման ռեզերվացման մեխանիզմը, որը հասանելի է տեղական ժողովրդին, Ծրագրի ԾԻԳ-ին և Կապալառուի հասցեագրված մտահոգությունները, որոնք տրվում են ԲՌՄ- ի միջոցով սահմանված ժամանակացույցով, եթե դրանք պարտադիր են
	<p>Աշխատուժի կառավարում</p>	<ul style="list-style-type: none"> • Հնարավորության դեպքում աշխատանքային ճամբարները չպետք է տեղակայվեն տեղական համայնքների մոտ • Աշխատանքային ճամբարների հիմնումը և շահագործումը պետք է իրականացվի հարեւան համայնքների

		<p>հետ խորհրդակցելով</p> <ul style="list-style-type: none"> • Կապալառուն հնարավորինս վարձակալում է աշխատուժ հարևան համայնքներից: Որտեղ և երբ հնարավոր է, աշխատողների հմտությունների ուսուցումը պետք է տրամադրվի տեղական ժողովրդի մասնակցությունը խթանելու համար: • Կապալառուն ապահովում է շինարարական հրապարակի հարմար վայրերում (զուգարաններ եւ լվացքատներ), տաք եւ սառը հոսող ջրի, օճառի եւ ձեռքի չորացման սարքերի ապահովմամբ: Ցանկացած բնակելի աշխատանքային ճամբարի համար պետք է ստեղծվի ժամանակավոր սեպտիկ հոր, և առանց հարևան ջրատարների աղտոտման: • Կապալառուն բարձրացնում է իր աշխատակիցների իրազեկվածությունը ընդհանուր փոխհարաբերությունների կառավարման վերաբերյալ տեղական բնակչության հետ, հաստատում է վարքագծի կանոնները՝ միջազգային պրակտիկային համապատասխան և խստորեն կիրառում դրանք, ներառյալ աշխատողների ազատում և համապատասխան չափի ֆինանսական տուգանքների կիրառում:
--	--	---

ՄԱՍ 4: ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (էթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
Շինարարության փուլ						
համայնքի տեղեկացվածություն նախատեսվող աշխատանքների վերաբերյալ	համայնքի ղեկավարի գրասենյակում	քննարկում/ տեղագնում	այց՝ մինչև շինարարական աշխատանքներ սկսելը	ծրագրով նախատեսված աշխատանքների մասին իրազեկման նպատակով	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
բոլոր պահանջվող թույլտվությունները առկայություն	համայնքի ղեկավարի գրասենյակում, կապալառուի գրասենյակում	փաստաթղթերի ուսումնասիրում	այց՝ մինչև շինարարական աշխատանքներ սկսելը	բոլոր պահանջվող թույլտվությունների և համաձայնությունների առկայությունը ապահովելու նպատակով	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
բանվորների կողմից անձնական պաշտպանության միջոցների օգտագործում	շինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ շինարարության ընթացքում	բանվորների անվտանգությունն ապահովելու նպատակով	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
շինարարական հրապարակում փոշու նստեցում	շինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ շինարարության ընթացքում	առաջացող փոշու քանակը նվազագույնի հասցնելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (էթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
Չինարարական հրապարակում արգելվում է Չինարարական նյութերի / թափոնների բաց այրումը	Չինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ Չինարարության ընթացքում	օդի աղտոտումը նվազագույնի հասցնելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը Չինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
Չինարարական տեխնիկան չի մատնված անգործության	Չինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ Չինարարության ընթացքում	օդի աղտոտումը նվազագույնի հասցնելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը Չինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
Չինարարության աղմուկը սահմանափակված է ցերեկային ժամերով	Չինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ Չինարարության ընթացքում	աղմուկի ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը Չինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
աղբի ժամանակավոր կուտակման վայրերը սահմանված են հրապարակում	Չինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ Չինարարության ընթացքում	հատուկ սահմանված վայրերում աղբի կուտակումը ապահովելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը Չինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
Չինարարական աղբը պարբերաբար հավաքվում է և տեղափոխվում համաձայնեցված աղբավայր	Չինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ Չինարարության ընթացքում	Չինարարական հրապարակից աղբի ժամանակին հեռացումը ապահովելու նպատակով	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը Չինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
Չինարարական մեքենաները և	Չինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ Չինարարության ընթացքում,	ջրի աղտոտումը նվազագույնի հասցնելու	ներառված է ծրագրի	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը Չինարարության

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (եթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
մեխանիզմները լվացվում են միայն հատուկ հատկացված վայրերում, որտեղից արտահոսքը չի առաջացնի բնական մակերևութային ջրերի աղտոտում			մեքենաների / սարքավորման լվացման դեպքում	համար	բյուջեում	ն վերահսկող խորհրդատուի միջոցով
պատահական գտածոների հայտնաբերման դեպքում աշխատանքները դադարեցվել են և Մշակույթի նախարարությունը տեղեկացվել է	շինարարական հրապարակում	տեղագնում	պատահական գտածոների դեպքում	գտածոների վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
ծրագրի շրջանակում չեն օգտագործվում չլիցենզավորված հանքերը և աղբաթափման վայրերը	կապալառուի գրասենյակում, շինարարական հրապարակում	փաստաթղթերի ուսումնասիրում, տեղագնում	այց՝ շինարարության ընթացքում	շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնի հասցնելու համար	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով
ցուցանակների, նախագուշացնող նշանների և արգելափակողների տեղադրում, երթևեկության շրջանցում՝ հրապարակը տեսանելի դարձնելու և բնակչությանը	շինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ շինարարության ընթացքում	բանվորների և բնակիչների անվտանգությունը ապահովելու նպատակով	ներառված է ծրագրի բյուջեում	ՏԾԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության ն վերահսկող խորհրդատուի միջոցով

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (էթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխա- նատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
նախագգուշացնելու նպատակով						
հետիոտնի համար անվտանգ անցում-ների ապահովում՝ շինարարական երթև- եկության համընկման վայրերում	շինարարական հրապարակում	տեղագնում	այց՝ շինարարության ընթացքում	բանվորների և բնակիչների անվտանգությունը ապահովելու նպատակով	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
Դիմումի մատյանը հասանելի է եւ օգտագործվում է	շինարարական հրապարակում	տեղագնում	Շինարարության ընթացքում ամսեկան այցեր շին տեղամաս	ԲՌՄ-ի աշխատանքի ապահովում	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
Դիմումը քննարկվում և լուծվում է	շինարարական հրապարակում	տեղագնում	Շինարարության ընթացքում ամսական այցեր շին տեղամաս	ԲՌՄ-ի աշխատանքի ապահովում	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
Կապալառուի կողմից տեղական կապի անձն նշանակված և վերապատրաստված է	շինարարական հրապարակում	տեղագնում	Շինարարության ընթացքում ամսեկան այցեր շին տեղամաս	ԲՌՄ-ի աշխատանքի ապահովում	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (էթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
Ոչ հմուտ աշխատողները հարակից համայնքերից վարձակալված վերապատրաստված են	շինարարական հրապարակում	տեղագնում	Շինարարության ընթացքում ամսական այցեր շին տեղամաս	Համայնքի օգուտների ապահովում	ներառված է ծրագրի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
Շահագործման փուլ						
Ճանապարհի ծածկի և կողմակների մաքրում մեքենաներից նետված աղբից և պատահարների հետևանքով սատկած կենդանիների մնացորդներից	Ճանապարհային հատվածի երթևեկային մասը և կողակները	տեղագնում	պարբերաբար, ըստ համայնքապետարանի որոշման	երթևեկության անվտանգությունը և ճանապարհի էսթետիկ տեսքն ապահովելու նպատակով	պետք է ներառվի համայնքապետարանի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
Ճանապարհի ջրահեռացման համակարգի աշխատունակ վիճակում պահպանում	Ճանապարհային հատվածի երթևեկային մասը և կողակները	տեղագնում	պարբերաբար, ըստ համայնքապետարանի որոշման	Երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհների վերականգնման հաճախականություններ ի և ծախսերի նվազեցման նպատակով	պետք է ներառվի համայնքապետարանի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով
Ճանապարհային վթարների դեպքում բեռների հեղուկ կամ փոշիանման թափված նյութերի հավաքում,	Ճանապարհային հատվածի երթևեկային մասը և կողակները	տեղագնում	ինչպես պահանջվում է վթարին արձագանքելու համար	Երթևեկության անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման	պետք է ներառվի համայնքապետարանի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով

Ո՞ր (ցուցանիշն է ենթակա մոնիտորինգի)	Որտե՞ղ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ինչպե՞ս (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ անընդհատ)	Ինչո՞ւ (է կատարվում ցուցանիշի մոնիտորինգը)	Գինը (էթե ներառված չէ ծրագրի բյուջեում)	Ո՞վ (է պատասխանատու ցուցանիշի մոնիտորինգի համար)
ապակտիվացում և հեռացում				նպատակով		
Ճանապարհի շահագործման ընթացքում աղբի պատշաճ հեռացում դեպի սահմանված աղբավայր	Ճանապարհային հատվածի երթևեկային մասը և կողնակները	տեղագնում	ինչպես պահանջվում է վթարին արձագանքելու համար	Երթևեկության անվտանգության ապահովման և շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման նպատակով	պետք է ներառվի համայնքապետարանի բյուջեում	ՏՕԻԿ ՊՈԱԿ-ը շինարարության և վերահսկող խորհրդատուի միջոցով

Հաշվետվություն

1. Ծրագրի ԲՍԿՊ-ի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները պարտադիր են:
2. Կապալառուն Շինարարության վերահսկման խորհրդատուին կներկայացնի ԲՍԿՊ-ի իրականացման վերաբերյալ հաշվետվություն որպես ամսական առաջընթացի հաշվետվություն մաս: Ամսական հաշվետվությունները պետք է լինեն վերլուծական և ներառեն բացատրություններ անոմալիաների, անհամապատասխանությունների և խնդիրների հետ կապված:
3. Շինարարության վերահսկողության խորհրդատուն ՏԾԻԿ ՊՈԱԿ-ին ինչպես նաև ՀԲ-ին է ներկայացնում ամենամսյա մոնիտորինգի հաշվետվությունները, ամսական առաջընթացի զեկույցի և տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև փուլային ավարտի հաշվետվությունները բնապահպանական եւ սոցիալական երաշխիքների վերաբերյալ:
4. Հաշվետվությունները պետք է համապարփակ ներառի ԲՍԿՊ ի մեղմացնող միջոցառումների իրականացման բոլոր համապատասխան ասպեկտները (օրինակ, մեղմացնող միջոցը, նպատակը և օբյեկտը (ներ)ը, տեղանքը / վայրը, նյութերը և գործունեությունը, հանրային հաղորդակցությունը և բողոքները, մյուսները, ցանկացած բնապահպանական կանոնակարգ և պահանջներ, ինչպիսիք են վերապատրաստման / կողմնորոշման, թույլտվությունների, լիցենզիայի և այլն, որոնք հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկված են: Հաշվետվությունների ուրվագիծը կհամաձայնեցվի Շինարարության վերահսկողության խորհրդատուի և ՏԾԻԿ ՊՈԱԿ-ի հետ:
5. Վթարների դեպքերում (հրդեհ, պայթյուն, նավթային թափոն և բիտումի արտահոսք և այլն), Կապալառուն պետք է անհապաղ տեղեկացնի ինժեներին: Նախնական ծանուցումը կարող է լինել բանավոր որին կհետևի գրավոր զեկույցը՝ 24 ժամվա ընթացքում, երբ միջադեպը կամ վթարը տեղի է ունեցել:

Հավելված 1: Տեղանքի քարտեզ

Ա/ճ Մ5 – Սարդարապատ - ՆորԱրմավիր - S-3-52
Կմ 0+000 – կմ 6+146



Հավելված 2: Կարողությունների զարգացման ծրագիր

ԲՄԿՊ-ի և կիրառելի բնապահպանական կանոնների վերաբերյալ տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի դեգրադացիայի եւ սոցիալական խնդիրների:

Կապալառուի անձնակազմը բոլոր փուլերում պատասխանատու է շրջակա միջավայրի, սոցիալական, հնագիտական և աշխատանքային առողջության և անվտանգության հարցերում: Հետևաբար, ԲՄԿՊ-ի իրականացման վերաբերյալ կողմնորոշիչ դասընթացը պետք է մատուցվի Կապալառուի ամբողջ անձնակազմին:

Կապալառուի անձնակազմի կարողությունների զարգացումը կներառի հետևյալ թեմաները՝

- Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան, հիմնական պահանջներ և պարտականություններ
- Ընդհանուր անվտանգության կանոններ և կանոնակարգեր, որոնք պետք է հետևեն շինհրապարակում և ճամբարներում
- Շինարարական գործունեություն՝ հատուկ կանոններ և կանոնակարգեր, որոնք կարող են ներառել բարձրության վրա աշխատելը, ջրագծերում աշխատելը, կամուրջների վրա աշխատելը, էլեկտրական սարքերով աշխատելը, հանույթի աշխատանքներ և այլն:
- Մոտակա համայնքների հետ հարաբերությունները՝ բողոքների ստացում և հասցեագրում
- Աշխատողների իրավունքները և նրանց վարքագծի կանոնները

Շինարարական աշխատանքների մեկնարկից առաջ դասընթացը պետք է իրականացվի ՏԾԻԿ-ի կողմից՝ հսկողության խորհրդատուի աջակցությամբ:

Հավելված 3: Լուսանկարներ

Ասֆալտի որոշ հետքեր, հիմնականում գրունտային ճանապարհ



Ասֆալտի որոշ հետքեր հիմնականում գրունտային ճանապարհ



Առանց ծածկի, գրունտային ճանապարհ



Քայքայված ա/բ պատվածք՝ փոսերով



Հավելված 4: Հանրային լուումներ

Հանրային լուումների արձանագրություն

« 06 » « 07 » 2018թ.

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ժրագրի շրջանակներում « Հաննախագիծ Բնատիրոտ » կազմակերպության կողմից կազմվել է Մ5-Մարդարապատ-Նոր Արմավիր-S-3-52 կմ 0+000-կմ 6+146.6 ավտոճանապարհի հիմնանորոգման մանրամասն նախագիծը և բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը: Նախագծված ճանապարհը անցնում է Մարդարապատ և Նոր Արմավիր համայնքներով: Հետազոտության և նախագծման ընթացքում ինժեներական թիմը սերտորեն աշխատել է համայնքի ղեկավարների հետ հանրության պահանջները, առաջարկությունները և մեկնաբանությունները վերջնական մանրամասն նախագծի մեջ ընդգրկելու համար: Այս հանրային լուումների նպատակն է ներկայացնել և քննարկել պատրաստված մանրամասն նախագիծը, բնապահպանական և սոցիալական կառավարման պլանը, ապահովել, որ հասարակական մտահոգությունները ներառված լինեն նախագծում: Համայնքի ղեկավարները նախապես տեղեկացվել են հանրային լուումների օրվա, ժամի և վայրի մասին:

Նախագծով նախատեսված ծածկի վերականգնման, մայրերի և ջրահեռացման վերականգնման, հանույթի և լիցքի բոլոր աշխատանքները, մանրամասն ներկայացվել է տվյալ ճանապարհահատվածի համար մշակված Բնապահպանական և Սոցիալական կառավարման պլանում, մասնավորապես վերականգնման աշխատանքների իրականացման ընթացքում և աշխատանքների ավարտից հետո շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները, դրանք կանխարգելելու, մեղմացնելու և նվազագույնի հասցնելու միջոցառումները, իրականացման համար պատասխանատու կողմերը և այլն: Ներկայացվել են նաև ստուգաթերթիկի ձևաչափով մշակված Բնապահպանական և Սոցիալական կառավարման պլանի հիմնական չորս բաժինները: Հաշվի առնելով, որ նախատեսված աշխատանքներն ունեն վերականգնողական բնույթ և իրականացվելու են գոյություն ունեցող ճանապարհի վրա, կարելի է եզրակացնել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր անբարենպաստ ազդեցությունները կլինեն փոքրածավալ, կարճաժամկետ և ամբողջությամբ կապված վերականգնման աշխատանքների հետ, և հողի օտարման կարիք չի առաջանա:

Բնապահպանական և Սոցիալական կառավարման պլանը մանրամասն քննարկվել է Մարդարապատ և Նոր Արմավիր համայնքների ղեկավարության և բնակիչների հետ: Քննարկումների ընթացքում նախագծողների կողմից ներկայացվել է բոլոր վերանորոգվող հատվածների համար նախագծով նախատեսված աշխատանքները: Մարդարապատ և Նոր Արմավիր բնակավայրերի տարածքով անցնող ճանապարհահատվածների վերանորոգման աշխատանքների ընթացքում, Մարդարապատ և Նոր Արմավիր համայնքների տարածքում չի առաջանում որևէ հողատարածքի կամ այլ գույքի իրացման խնդիր, միաժամանակ նախագծային աշխատանքներում ներառվում են անհրաժեշտ ջրահեռացման, անվտանգության և ծածկի վերականգնման խնդիրների լուծումները:

Նախագիծը ներկայացվելուց հետո մասնակիցներին առաջարկեց տալ հարցեր: Հանդիպման ընթացքում բարձրացված հարցերը և համապատասխան պատասխանները, ինչպես նաև արված լուսանկարները կցված են սույն արձանագրությանը: Հանրային լուումների ավարտից հետո մասնակիցները ստորագրեցին արձանագրությունը, որպես Մ5-Մարդարապատ-Նոր Արմավիր-S-3-52 ճանապարհի մանրամասն նախագծի բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի հաստատում:

Սույնով տալիս ենք մեր համաձայնությունը ա/ճ Մ5-Մարդարապատ-Նոր Արմավիր-S-3-52 նախագծին բնապահպանական և սոցիալական կառավարման պլանին:

Մարդարապատ համայնքի ղեկավար՝ Բ. Արդանյան
համայնքի բնակիչներ՝ Գրգորյան Կարեն Գևորգի
համայնքի բնակիչներ՝ Մկրտչյան Կարեն Գևորգի
համայնքի բնակիչներ՝ Մկրտչյան Կարեն Գևորգի
Նոր Արմավիր համայնքի ղեկավար՝ Ա. Ավետիսյան
համայնքի բնակիչներ՝ Մկրտչյան Կարեն Գևորգի
համայնքի բնակիչներ՝ Մկրտչյան Կարեն Գևորգի
համայնքի բնակիչներ՝ Մկրտչյան Կարեն Գևորգի

« Տրանսպորտի ԾԻԿ » ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Ս. Մկրտչյան
« Հաննախագիծ Բնատիրոտ » ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Գ. Մկրտչյան



1. Հարց (Նոր Արմավիր համայնքի բնակիչներ) – Ե՞րբ են մեկնարկելու շինարարական աշխատանքները:
 - Պատասխան (ՏՕԻԿ ներկայացուցիչ Ս. Մկրտչյան) – Շինարարությունը կմեկնարկվի, ամենայն հավանականությամբ, հաջորդ տարի գարնանը:
2. Հարց (Սարդարապատ համայնքի բնակիչներ) – Որքա՞ն է ճանապարհի լայնությունը և արդյո՞ք նախատեսված են մայթեր:
 - Պատասխան (Ն.Գ.Ի Գ. Դավթյան) – Սարդարապատում ճանապարհի երթևեկելի մասի լայնությունը 8մ է, Նոր Արմավիրում 12մ, իսկ մայթերի լայնությունը 1.5-2.5մ: Բնակավայրից դուրս ճանապարհի երթևեկելի մասի լայնությունը 6մ է:
3. Հարց (Նոր Արմավիր համայնքի բնակիչներ) – Արդյո՞ք նախատեսված են գյուղտեխնիկայի անցումներ:
 - Պատասխան (Ն.Գ.Ի Գ. Դավթյան) – Այո, գյուղտեխնիկայի անցումներ նախատեսված են համայնքապետերի կողմից նշված տեղամասերում:
4. Հարց (Նոր Արմավիր համայնքի բնակիչներ) – Որտե՞ղ են նախատեսված <պարկած ուստիկաններ>: Կարծում եմ, պետք է բոլոր փողոցներում նախատեսված լինի:

➤ Պատասխան (Ն.Գ.Ի Գ. Դավթյան) – Արհեստական անհարթությունները հիմնականում նախատեսված են դպրոցների և մանկապարտեզների հատվածներում:

5. Հարց (Սարգսրապատ համայնքի բնակիչներ) – Նախագծի սկզբում գոյություն ունեցող Սլավինսկի տիպի կամուրջը ընդգրկվա՞ծ է նախագծում:

➤ Պատասխան (Ն.Գ.Ի Գ. Դավթյան) – Այո, նախագծով նախատեսված է նախագծի սկզբում գոյություն ունեցող Սլավինսկի տիպի կամրջի նորոգում: